

վերայ, իմ սիրելիներին վերայ՝ թող լինի հոգւոյս վերջին մտած-
մունքը, նորա քոյն իւր վրայից ընկնելուց առաջ: Երբ որ այդ
քողը ցած ընկու, հոգիս կը ճախրի արդէն այս աշխարհիցս գէտի
կենդանեաց ու կատարելոց երկիրն:

Եւ սորա համար, ո՞վ Փրկիչ իմ՝ Յիսուս Քրիստոս, Գու եղի՞ր
իմ կեանքս, որովհետեւ առանց քեզ մեռնելս իմ հոգւոյս անյոյս
կորուստը կլինէր: Ես ուզումեմ Ք* մաքրով մտածել, Ք* առ-
տուածային ուսման ճանապարհովը գնալ, Ք* վսեմ կերպով
մտիկ տալ աշխարհային բանի վերայ, Ք* սիրով մարդոց սիրել,
Ք* հռանդով գ ամեն տեղ երջանկութիւն տարածել, Ք* սրտով
յայթել եմ առաքինութեանս ամեն մի արգելքին, Ք* համբ-
րութեամբ ամեն աշխարհիս նեղութիւնն, Ք* խմտութեամբ
կեանքի ուրախութիւնները վայելել, Ք* հաւատով՝ լիապատար
վստահութեամբ նախախնամութեան ճանապարհները մտնել ու
Ք* աչքով գ յաւիտենական կեանքի վերայ մտիկ տալ՝ իրբեւ իմ
հօրս տան վերայ, և Սաեւծող Աստուծոս՝ իրբեւ իմ հօրս վերայ:

Քրիստոս լինի իմ կեանքս և մեռնելն իմ շահ:

(Թարգմ.)

Գ. Ե. Ա.

ԱԹՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

(Ե-բ-ն-ի. Ա-բ-բ-դ. 1886 թ. Ժ.)

Գ.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՂԵՂԵՅԻ

Բաղձալով կարեւորը համառօտակի ներկայել եւ ընդարձակ
դատճառքանութեանց մէջ չմտնել, մեր Ս. եկեղեցւոյն վրայ
քանի մի սկզբնական և հիմնական կէտերը քաղուածոյ սճով
յառաջ կը բերեմք:

Հայոց եկեղեցին առաքելական է և առաքելական աթոռ ունի
առաքելոց ժամանակէն, Սրբոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի
քարոզութեամբ լուսաւորեալ և իշխանութեամբ հաստատեալ և
մարտիրոսական մահուամբ կնքեալ: Սոյն աթոռը բաւական ժա-
մանակ տեւելով, ըստ մեզ՝ Շաւարշանայ աթոռոյն մէջ, երրորդ
դարուն կէսերը ընդհատեցաւ և կէս դար յետոյ չորրորդ դարուն
ճիշտ սկիզբը վերանորոգեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռքը:

Հայոց եկեղեցւոյ գլուխն անկախ է ուրիշ գերագոյն եկեղեցական աստիճանաւորէ, և ինքն է ինքնագլուխ հովուապետ և հայրապետ և քաջանայապետ և եպիսկոպոսապետ Հայաստանեայց եկեղեցւոյ:

Հայոց եկեղեցւոյ գլուխն աւելի սովորաբար կրկնուի ի կաթողիկոս, սակայն այդ անունը, որ միայն մեր ազգին սեփական անուն մի է, թէպէտ բառին ծագումը յունական է, ամէն ժամանակ համանշանակ և համազօր ճանաչուած է պատրիարք անուան, որովհետեւ թէ պատրիարքները մեր մէջ կաթողիկոս կոչուած են և թէ կաթողիկոս անունն արտաքիններու մէջ պատրիարք թարգմանուած է:

Հայոց եկեղեցւոյ գլուխն եղող կաթողիկոսին կամ պատրիարքին զիրքը և կարգը որոշուած չէ ընդհանուր եկեղեցւոյ սովորութեան մէջ, զի եկեղեցին Հռոմէական կասեբութեան մէջ ստացած է իւր կազմութիւնը, իւր ընդարձագոյն տարածումը և իւր կարգաց ու կանոնաց կազմութիւնը, ուստի և Հռոմէական կայսերութեան մէջ եղող հինգ պատրիարքական աթոռներ իրենց մէջ կարգ որոշած են և կայսերութենէ զուրս եղող աթոռներուն թիւ և տեղ չեն սահմանած: Անկէ յետոյ ոչ բոլորից ի միասին գալու և այգպիսի խնդիրներով զբաղելու պատեհ չէ եղած: Արտաքինք բնական կերպով մը Հայոց աթոռոյն վեցերորդ տեղը սուր են տալ, իսկ մերայինք գրեթէ այդ խնդրով զբաղած չեն:

Հայոց աթոռոյն նախնական և բնական սահմանը եղած է Հռոմէական կայսերութեան սահմանէն դուրս եղող Հայաստանը, որ է Մեծ Հայքը յաճեալ կողմն Նիքաոսայ: Հայոց աթոռոյն վերջնական կազմութեան միջոցին՝ այսինքն Առևտուրչին ժամանակ, Հռոմէական կայսերութիւնն կիշխէր Փոքր Հայոց և միջագետաց, և սոյն պատճառով այդ նահանգներն մնացած են Վեստրիոյ և Անտիոքոյ աթոռներուն: Եթէ տեւեր և մնայր հնաւանդ սովորութիւնը որ եկեղեցական իրաւասութիւնը տեղական չը ճանչցուէր և ոչ անձնական, Հայաստանեայց աթոռոյն բնական և սեփական սահման պիտի ճանաչէինք Մեծ Հայոց տասնուհինգ նահանգները, աւելցնելով անոնց վրայ հիւսիսակողման Ասուկասեան երկիրները, յորս կը բնակին Վրաց և Ալուանից և Եգերաց ազգերը, որք այն ժամանակ Հայոց ենթարկեալ էին և Հայոց եկեղեցւոյն ալ ենթարկուեցան:

Հայոց աթոռոյն իրաւաւ թիւնն յետագայ դարուց ստիպու-
թեան համաձայն կը տարածի այժմ պարզապէս ամենայն Հայոց
միայն ոչսինքն բոլոր հայածէս քրիստոնէից միայն որք Հայ եկե-
ղեցւոյ կը վերաբերին ուր որ եւ լինին ի հին եւ ի նոր աշխարհի
որ եւ է պատրիարքութեան սահմանոց մէջ միայն թէ իրենց
հայրենական եկեղեցիէն ապստամբած եւ օտար դաւանութեան
կամ ծխի կամ եկեղեցւոյ յարած չլինին:

Հայոց եկեղեցին այսօր ինքնագլուխ ճանչցուած է ամէն քրիս-
տոնեաներէ, բայց այդ ինքնագլխութեան ծագումը նոյն կերպով
ընդունուած չէ ամէն քրիստոնէաներէ, զոնէ նոյն կերպով ըն-
դունուած չէ ամէն օտար եկեղեցեաց հեղինակներէ, եւ ըստ
այսմ թէպէտեւ անհակառակ ընդունուած է այժմեան եղելու-
թիւնը, այլ անհակառակ ընդունուած չէ նոյն եղելութեան ծ-
գումը: Իսկ այդ հակառակութիւնն յներկայանար իրր պարզ
պատմական խնդիր մը, որովհետ պէտք էր լինէր ըստ իւր բնու-
թեան, այլ կը ներկայանայ այն իրր հետեւանք եկեղեցեաց բա-
ժանման եւ իրարու մէջ մտած գաւառողական տարբերութեան:

Հայաստանեայց աթոռոյն ազատութեան ծագման նկատմամբ
ցարգ զարցուած կամ խորհուած տարբեր կարծիք հետեւեալնե-
րուն կրնան վերածուիլ:

Ոմանք կը կարծեն թէ Հայաստան էր նահանգ վիճակեալ եր-
սարքութեան Պէնտասի կամ Աւսարիոյ Աստղադիկացւոց, եւ թէ
յանկարծ ապստամբեցաւ այդ վիճակային հպատակութենէն,
լուծը նեաեց եւ հռչակեց զինքն ազատ եւ եղև աթոռ ինքնա-
գլուխ: Այդ ենթադրութեամբ Հայոց աթոռը առաքելական եւ
նախնական եւ օրինական ինքնիշխանութիւն ունեցած չէ, այլ
միայն կանոնական օրինազանցութեամբ եւ եկեղեցական ապս-
տամբութեամբ զայն ձեռք ձգած է, որով մեղադրելի ծագում մը
կունենայ իւր ինքնագլխութիւնը: Այդ կարծիքն մանաւանդ
յուշաց է, որք առանց Հայոց եկեղեցւոյ գաւառութեան գէմ զի-
նելու, կուզեն իրենց նպաստաւոր կերպով գործը կերպարանել:

Այլք կրնեն թէ Հայաստան մասն էր պատրիարքութեան Ան-
տիոքայ կամ պատրիարքութեան Արեւելից եւ թէ միայն Քաղկե-
դոնի ժողովէն յետոյ եւ այն ժողովոյն առթիւ բաժնաւեցաւ եւ
ինքնագլուխ եղաւ, չուզելով այդ ժողովէն հաստատեալ գուա-
նութիւնը ընդունել, զոր ընդունելին Յոյնք եւ Ատալիք: Այդ են-

Թաղրութեան մէջ Հայոց աթոռը դարձեալ առաքելական և սկզբնական և օրինական ինքնիշխանութիւն ունեցած չրինիր, այլ լսեց գաւառական խնդրով ձեռք ձգած կըլինի անկախութիւնը: Այդ կարծեաց գլխաւոր պաշտպաններն են արեւելեան եկեղեցիներէն Հռովմէականութեան յարող և ի նմին վարժապետ հեղինակք: յորս գլխաւոր տեղին կը բռնէ մարտնչին Աստեմանի: Սորա կը Գանան ամէն կերպերով սնարգել և նախատել Հայոց եկեղեցին, սակայն բարեբողգարար իրենց հոգւոյն զգացումները նշաւակելէ զատ օգուտ մը չեն քաշեր:

Կան ևս քսողներ թէ Հայաստան բնական կերպով Աեսարիոյ Ասպաղոսիկիոյ աթոռոյն հպատակ պիտի մնայր, զօրութեամբ առաջին ձեռնադրութեան՝ զոր ստացաւ անտի Լուսաւորչին, եթէ Աեսարիոյ աթոռոյն վրայ իշխանութեան ազդեցութիւն ունեցող աթոռ մը, որովոր կը կարծեն Հռովմայ աթոռը, այդ կարգը չփոփոխէր, և եթէ Հռովմայ Հայրապետ Սեդրեարտա իւր ազատ կամօք և բարձր իշխանութեամբ Հայաստանը չհանէր Աեսարիոյ հպատակութենէն և նմին ազատ պատրիարքութեան իրաւասութիւն և արտօնութիւն չշնորհէր: Այդ կարծեաց պաշտպանք են Հռովմէական եկեղեցւոյ մօլեալ հեղինակք, որք որչոր եկեղեցական պատմութեան մէջ ուրիշ բան չեն տեսներ եթէ ոչ Հռովմայ պապերուն գերագոյն իշխանութիւնը, առանց հոգ տանելու որ ճշգրիտ և քննադատական պատմութիւնը հաստատէ կամ ոչ իրենց բաղձանքը, իրենք միշտ պատրաստ ունին անխաւեր վիճարկութեանց և բռնադատեալ մեկնութեանց հարուստ շտեմարան մը՝ ուստի իրենց կարծիքներուն համար կարծեցեալ ապացուցութիւններ կը հանեն:

Այդ վերջին կարծեաց հետևողներէն ոմանք կզգան թէ չեն կարող հաստատել Աեսարիոյ կամ Անտիոքայ աթոռներուն կայսերութեան սահմանէն դուրս իշխանութիւն ունենալը, անոր համար կրօնն թէ Հայաստան էր և պիտի մնայր առանց բնական գլխոյ, եթէ Հռովմայ աթոռն այդ աթիւ իւր կարծեցեալ լիազոյն իշխանութիւնը չգործածէր և չբաւնայր այդ անիշխանութիւնը և Հայաստանը առանձինն պատրիարքութիւն մը չկազմէր: Ասանցմէ ոմանք պատմական ճշտութեանց խղճիւ կը տարակուսին Ս. Լուսաւորչին Ս. Սեդրեարտաի ժամանակ ի Հռովմ ուղևորելուն վրայ, զի չեն համաձայնիր պատմական պարագայք և

թուականը. ուստի ճանապարհորդութիւնը և հետեւ արար տու - չութիւնը կուտան Սեղբեստրոսի նախորդներէն Մեղքիատէսի կամ Եւսեբիոսի: Սակայն ասոնց կարծիքն ալ չկրնար ապացու - ցուել, և նոյն իսկ իրենք կարող չեն լինիր պատմական մի փաստ յառաջ բերել Լուսաւորչի ուղեւորութեան, և վերջ ի վերջոյ կը պարտաւորին հակասութեան մէջ իյնալ ուղեւորութիւնը մերժե - լով և տուուչութիւնը ընդունելով:

Մեր ընդհակուսին կը կարծեմք թէ անհիմն և կեղտկարծ են բոլոր այդ գրութիւնները կամ ենթադրութիւնները, որք չեն պատասխաներ պատմական ճշմարտութեանց: Իսկ Հայոց աթո - ռոյն ինքնագլխութիւնը կը ճանաչեմք առաքելական, սկզբնական և օրինական, ոչ յապտամբութենէ, ոչ ի հերձուածոյ և ոչ ի շնորհմանէ ուրուք ո որ և լինի այն, այլ ըստ կամաց Աստուծոյ, որ է առաջին հեղինակ եկեղեցական օրինաց:

Եկեղեցւոյ մէջ գերագոյն եպիսկոպոսութիւնք սկզբնաւորեցան նախ առաքելական յաջորդութեամբ, այլ զի ոչ ամեն առաքելոյ յաջորդութիւնք գերագոյն աթոռներ ունեցան, յայտնի կը հե - տեւի թէ այլ պատճառ ալ հարկ էր ունենալ, և այդ պատճառն եղած է քաղաքական բաժանմանց պահանջմունքը: Լամբրոնաց - ւոյն՝ չորս գլխաւոր աթոռները աւետարաններուն գրուելէն հե - տեւցնելը և սնդելը թէ Անտիոք առաջին պատրիարք է զի անդ գրեց Մատթէոս, Աղէքսանդրիա երկրորդ՝ զի անդ գրեց Մարկոս, Հռովմ՝ երրորդ՝ զի անդ գրեց Ղուկաս և Նիեսոս չորրորդ՝ զի անդ գրեց Յովհաննէս, սրբոյ բարեպաշտական կարծիք է, մանաւանդ որ անտոյգ է Մատթէոսի յԱնտիոք գրելը, և նոր է Նիեսոսի չորրորդ պատրիարքութիւնը: Նմանապէս անհիմն է Հռովմէական եկեղեցւոյ հեղինակաց ոմանց պատրիարքութիւնները բոլոր Պետ - րոսին շնորհիւ ճանչնալը, իբր այն թէ Հռովմ՝ պատրիարքական է զի անդ մեռաւ Պետրոս, Անտիոք պատրիարքական է զի անդ յա - ռաջագոյն նստաւ Պետրոս, Աղէքսանդրիա պատրիարքական է զի անդ ի Պետրոսէ առաքեցաւ Մարկոս: Այդ ալ լոկ քմահաճ բաղձանոց համաձայն մեկնութիւն է: Իսկ մեր յայտնապէս և համաձայն պատմութեան և հետեւելով պատմական ճշմարտու - թեան կը կարծեմք թէ առաքելական յաջորդութիւնք ոմանք բերմամբ պարագայից կեդրոնական քաղաքներու մէջ հաստա - տուեցան և գերագոյն իշխանութիւն ունենալու առաջնորդեցին:

և այսպէս գերագոյն աթոռք կազմուեցան թէ կայսերութեան մէջ և թէ կայսերութենէ զուրս յար և նման քաղաքական կամ պետական բաժանմանց, և ոչ միայն գերագոյն իշխանութեանց աթոռք, այլ և միջակային իշխանութեանց և ստորագոյն իշխանութեանց աթոռք բոլորն ալ քաղաքական լաժանմանց համաձայն կազմուեցան, զի նահանգապետ լի քաղաքք միշտ մետրապօլիտական եղան և գաւառք մի մի եպիսկոպոսութիւն կազմեցին:

Համաձայն այդ դրութեան Հայոց աշխարհն ալ որ էր ազատ թագաւորութիւն արաքոյ կայսերութեան, իր մայրաքաղաքին մէջ ի Վաղարշապատ ունեցաւ իւր պատրիարքական աթոռք, իսկ յարակից երկիրներու մէջ, զոր օրինակ ի Վիրս և յԱղուանս, ունեցաւ փոքր կաթողիկոսներ, համապատիւ Լատինաց պրիմասներուն կամ Յունաց եքսարքոսներուն, իւրաքանչիւր նահանգի մէջ ունեցաւ մետրապօլիտ արքեպիսկոպոսներ, և իւրաքանչիւր գաւառի մէջ ալ եպիսկոպոսներ:

Իսկ ինքնագլխութեան կազմանէ կը պնդեմք թէ ի սկզբանէ և միշտ եղև այսպէս, թէ երբէք ուրիշ գերագոյն իշխանութեան ենթարկեալ չեղաւ, և թէ երբէք օտար մեծ աթոռ մը Հայաստանի վրայ գերագոյն իշխանութիւն չգործածեց, և թէ հակառակ կարծիքներ զորս վերը յիշեցինք չունին ձեռուրնին և ոչ մի հաւանութիւն հրաւիրող փաստ: Զայդ ամենայն պիտի հաստատեմք մանրակրկիտ խուզողութեամբ եկեղեցական յիշատակաց և հնաւանդ վկայութեանց:

Գ.

ՍԱՀՅԱՆԻՔ ԱՐՈՒՈՅՑ

Անոնք որ, ինչպէս յիշեցինք, կը պնդեն թէ Հայոց Աթոռը որ և է ուրիշ Աթոռոյ մը ենթարկեալ էր, պէտք է որ իրենց խօսքը հաստատող պատմական փաստեր յառաջ բերեն, թէ ոչ, մեք իրաւունք կունենամք միշտ մերժել իրենց կարծիքը և նկատել զայն իբր մի քմահաճ գիւտ և ոչ երբէք իբր մէկ պատմական ճշմարտութիւն: Այդ պարզ կերպով կը վարուիմք մեք այն ամեն կարծիքներու հետ, որք Հայոց Աթոռոյն կը վերաբերին և նորա հայ-

բաղիտական իրաւանց ծագման վրայ ձախող գրութիւն մը կը յայտնեն: Մեր մեր համադումէն չեմք շեղիր եթէ ոչ յայտնի և վաւերական ապացուցմանց դիմաց: Չեմք ուզեր Հայոց Հայրապետական իրաւանց ստիճաներուն ներհակընդդէմ կարծիքները իրարու բաղիտեցնելու ոճը գործածել: Վասն զի մարթ էր խորհիլ թէ անոնք ղերար ջրեւոյթ և իւրաքանչիւրն ալ զինքն յաղթական սեպելով, մեզի իրաւունք կուտան եղբակացնելու թէ հակառակող կարծիքներուն քննութենէն յետոյ, Հայոց Հայրապետութեան սկըզբնական անկախութեան դրութիւնը վիճարանութեանց ապարկողին տէր կը մնայ:

Եկեղեցւոյ Հայրապետական վիճակաց Նիկիոյ ժողովէն առաջ տնեցած աշխարհագրական բաժանումը եկեղեցական հնազանդ պատմութեան ծանրագոյն խնդիրն էր մին է: Ազէ քսանդրիոյ և Հռովմայ և Անտիոքայ պատրիարքութեանց կամ հայրապետութեանց նախնական գոյութիւնը և շրջակայ գաւառաց վրայ գերագոյն իշխանութիւն վայելելը պատմական ճշմարտութիւն մի է: Նմանազէս ստոյգ է թէ երեք աւրիշ բարձրատիճան գլուխք եկեղեցւոյ կը նստէին ի Անտարիա Աստուգոյիկիոյ, յԵփեսոս Ասիոյ և ի Հերակլիա Փրակիոյ և մերձակայ մետրապօլիտութեանց վրայ իշխանութիւն կը վարէին: Այլ վերջին երեք ինքնագլուխք էին թէ և Անտիոքայ պատրիարքութեան ենթարկեալք, այս կէտին վրայ կարծիքներ կը տարբերին: Մեր թէպէտ պէտք չունիմք այդ վիճաբանութեան հետեւել, վասն զի մեր նպատակին համար երկրորդական խնդիր մի է: սակայն գիտեմք թէ շատ նշանաւոր հեղինակներ երկը վերջին աթոռոց ինքնագլուխք լինելը կը պաշտպանեն, և Հռովմական կայսերութեան քաղաքական գաստկարգութեան ոճն ալ կառաջնորդէ մեզ այդ կարծեաց: Ադրիանոս կայսեր օրէն Ազէքսանդրիա և Անտիոք և Անտարիա և Եփեսոս և Հերակլիա հինգ վերականգնութեանց մայրաքաղաքներն էին, որք էին վերականգնութիւնք Եգիպտոսի, Արևելից, Պանտոսի, Ասիոյ և Փրակիոյ, և ինչպէս քաղաքական սոմամը այդ հինգ վերականգնութիւնք իրարմէ կախում չունէին, նոյնպէս էր և եկեղեցական առմամբ: Նիկիոյ Ա. ժողովն կը խօսի ոչ միայն Ազէքսանդրիոյ և Հռովմայ և Անտիոքայ աթոռոց վրայ, այլ կը խօսի նաև այլ և ուր գաւառաց վրայ, յորս կային եկեղեցական գլուխք՝ մետրապօլիտաց վրայ իշխողք և յիշատակեալ երեք աթոռոց հաւատար իրա-

ւունք վայելողք: Ահա Ս. Ժողովոյն խօսքերն. « Նախնեաց սովո-
 « րութիւնք պահեսցին որպէս ենն յՅգիպտոս ի Նիքիոս, և ի Պեն-
 « տոպոլիս, զի Աղէքսանդրիոյ եպիսկոպոսն ունիցի զիշխանութիւն
 « ի վերայ սոցա ամենեցոսն, վասն զի և Հռովմայեցւոյ եպիսկո-
 « պոսին այս սովորութիւն է. նոյնպէս և յԱնտիոք և յայլ ևս
 « գաւառս պահեսցին իշխանութիւնք և պատիւք և մեծութիւնք
 « իւրաքանչիւր եկեղեցեաց: » (Ս. Ժողով Նիկիոյ, կանոն 2. ըստ
 Յունական բնագրին: Acta. II, 35): Որովհետեւ Նիկիոյ Ժողովոյն
 խօսքերը կը պահանջեն որ Աղէքսանդրիայէ և Հռովմէ և Անտիո-
 քէ զոտ ալ և ինքնագլուխ աթոռներ լինին. ծիծաղելի կը լի-
 նէր այդպիսի ինքնագլուխ աթոռներ որոնել այլուր, քանի որ
 պատմութիւնը ցոյց կուտայ մեզ Կեսարիոյ և Նիքիոսի և Հերակ-
 լիոյ աթոռները. ըստ այսմ՝ յիշեալ երկոյ աթոռոց ինքնագլխու-
 թեան պաշտպանները Նիկիոյ Ժողովոյն հեղինակութեամբ կը
 պաշտպանեն իրենց կարծիքը: Նկատելու է ևս որ Նիկիոյ կանոնը
 կը հիմնուի նախկին սովորութեան վրայ, և անտի կը հետեւի թէ
 Ժողովը չէ որ առաջին անգամ այդ ինքնագլխութիւնը կը սահ-
 մանէ: Այդ հիմանց վրայ յենլով մեք ալ կը հաւատամք թէ Կե-
 սարիոյ և Նիքիոսի և Հերակլիոյ աթոռոց անկախութիւնը յա-
 ռաջագոյն է քան զԺողովն Նիկիոյ: Իսկ մեր նպատակին գալով
 կեդրակացնեմք և իրր պատմական ստուգութիւն կը ճանաչեմք,
 թէ Հայաստանի լուսաւորութեան ժամանակին ի 302, որ է ըսիւ
 Նիկիոյ Ժողովոյ գումարումէն 23 տարի յառաջ, Կեսարիոյ աթո-
 ռը ինքնագլուխ էր և Անտիոքայ աթոռէն բնաւ կախում չունէր:
 Չեմք ուղեր լռութեամբ անցնել թէ Կոստանդնուպոլսոյ Ս. Ժո-
 ղովն ալ Նիկիոյ կանոնը մեկնաբանելով յայտնապէս կը յիշատա-
 կէ հինգ ինքնագլուխ աթոռները, ու կըսէ. « Ըստ կանոնաց՝ Ա-
 « ղէքսանդրացւոց եպիսկոպոսն որ յՅգիպտոս եկեղեցիքն են տը-
 « նօրինեսցէ, իսկ որ յԱրևելս եպիսկոպոսըն են զԱրևելս կար-
 « գաւորեսցեն պահելով զիշխանութիւնս և զաւագութիւնս՝ որք
 « անկանին եկեղեցւոյն Անտիօքացւոց ըստ կանոնաց Նիկիական
 « Ժողովոյն, և որք յԱսիա են եպիսկոպոսունք որ ինչ յԱսիա
 « միայն կարգաւորութիւն է տնօրինեսցեն, և եպիսկոպոսունք
 « Թրակիոյ զԹրակիա միայն կարգաւորեսցեն, և Պոնտոսին զՊոն-
 « տոս: » (Ս. Ժողով. Կ. Պոլսոյ, կանոն Բ. Acta. II. 1125):

Ապա ուրեմն հին սովորութիւնն և Նիկիոյ կանոնն և Կոս-

տանդնուպօլսոյ Ժողովոյն բացատրութիւնն կը հաստատեն Կեսարիոյ աթոռոյն, ինչպէս նաեւ Նփեսոսի և Հերակլիոյ աթոռներուն տնկախութիւնը:

Սոյն այս փաստերը կը ցուցնեն թէ Աբէլէք անունը որով կը կոչուի Անտիոքոյ պատրիարքութեան սահմանը, պէտք չէ իմանալ իւր ընդարձակագոյն իմաստով, այսինքն այն իմաստով որով կը պարունակէ արեւելեան Եւրոպան և Ասիան և Ափրիկոյ մի մասը, այլ թէ այդ Աբէլէք անունը իւր ուրիշ անձկագոյն մի իմաստ, որով կը նշանակէ միայն այն քաղաքական վերակացութեան սահմանը, որոյ կեդրոնատեղին էր Անտիոքը, զոր օրինակ և Առաջնունը իբր անուն վերակացութեան որոյ կեդրոնատեղին էր Նփեսոս, չնշանակեր երբեք բովանդակ Ասիան, այլ փոքր Ասիոյ մի մասն միայն, Աբէլէք անունն այդ անձկագոյն իմաստը կապացուցանէ նախ Եգիպտոսի աթոռոյն տնկախութիւնը, վասն զի Եգիպտոս ալ կը պարունակի այդ անունն ամենաընդարձակ իմաստին մեջ: Նոյնը կապացուցանէ ևս Կեսարիոյ և Նփեսոսի և Հերակլիոյ աթոռոց կամ վիճակաց տնկախութիւնը, որք թէպէտ արտաքոյ Արեւելոյ վերակացութեան, սակայն կը պարունակեն Արեւելք կոչուած աշխարհի կողմին մէջ: Նշանակութեանց ճշդութիւնը կը ցուցնէ թէ որպիսի մեծ սխալանաց մէջ ինկած կը սեպուին այն հեղինակք որք Պապէլարք Եբէլէլէց անունակոչութեան այնպիսի ընդարձակ իմաստ մը տուին, որ Անտիոքոյ եպիսկոպոսին իշխանութիւնը տարածեցին մինչև Հնդկաստան, և կրնային ևս տարածել մինչև Սինէտտան և Ճապոնաստան: Անտիոքոյ Հայրապետութեան այդպիսի ընդարձակ սահման ունենալը բնաւ պատմութեան մէջ հիմ կամ փաստ չունի, որովհետեւ չեմք գտներ և ոչ մի գէպք յորում Անտիոքոյ Աթոռն այդ հեռաւոր աշխարհաց մէջ իշխանութիւն գործածած լինի: Քանի մի եպիսկոպոս ձեռնադրած լինելու յիշատակութիւնն ալ կապացուցանէ միայն նոյն եկեղեցեաց միջև տեղի ունեցած հոգեւորական հաղորդակցութիւնը, սակայն չապացուցաներ թէ այն աշխարհներ Անտիոքոյ աթոռոյն անմիջական և հայրապետական իշխանութեան ենթարկեալ լինին: Ձեռնադրութեան տող կամ առնուլը եկեղեցական յարաբերութեանց մէջ բնաւ կախում և հպատակութիւն ունենալու իմաստ չունի: Մեծ աթոռոց նորընտիր եպիսկոպոսունք պարտաւորեալ լինելով ուրիշ եպիսկոպոսէ մը ձեռնադրութիւն

առնուլ, առանց վասն այսր պարտաւոր լինելու ձեռնադրող եպիսկոպոսէ կախում մը դաւանել, սովորութիւն ունեցան այդ պատիւը շնորհել որոշեալ մի աթոռոյն, Հռովմայ պատրիարքներն ձեռնադրութիւն կառնուին Ոստիոյ եպիսկոպոսէն, Անտիոքայ պատրիարքներն ձեռնադրութիւն կառնուին Ապաւիոյ եպիսկոպոսէն, և Կոստանդնուպօլսոյ պատրիարքունք ալ կը ձեռնադրուէին Հերակլիոյ Արքեպիսկոպոսէն, Ուրիշ աթոռներ ալ իստիպել Հարկին պարտաւորեցան գիմել մերձաւոր աթոռոց, և այս տեսակէն է ևս Հայոց Լուսաւորչին Կեսարիոյ աթոռոյն գիմելը, ինչպէս իւր կարգին պիտի բացատրեմք:

Յարկ ըսածներնէս կորող եմք հղրակացնել թէ Հռովմէական կայսերութեան երկիրը ըստ նախնեաց սովորութեան բաժնուած էր վեց մեծ աթոռոց, յորոց Հինգն, այսինքն Անտիոք և Աղէքսանդրիա և Կեսարիա և Նիքսոս և Հերակլիա էին յարեւելայ իսկ մին միոյն այսինքն Հռովմ էր յարեւմուտս, կեղրակացնեմք ևս թէ Արեւելք անուն իբր սահման Անտիոքոյ աթոռոյն կը ցուցնէ միայն Արեւելից վերսկայութիւնը, որ ունէր տասն ու Հինգ նահանգներ, որք հաստատուն կերպով կը յիշատակուին ամեն հայրապետական սահմանաց ցուցակներուն մէջ (որք կը կոչուին *ἑξῆς* *ἡμερῶν* *ἡμερῶν* *ἡμερῶν*) և կը յիշատակուին միշտ իբր ենթարկեալք իշխանութեան աթոռոյն Անտիոքայ:

Այն պատճառները որք նախնեաց սովորութեամբ Հռովմէական կայսերութեան սահմանները վեց մեծ ինքնագլուխ աթոռներու բաշխեցին, զօրեցին ևս Հռովմէական կայսերութենէ դուրս գրոնուող քրիստոնեայ աշխարհներու համար ալ, և այլ ևս ինքնագլուխ մեծ աթոռներու բաշխեցին զայնս, Ասոնցմէ մին է Հայոց Հայրապետութեան աթոռը և կը տարածուի այն երկիրներու վրայ, որք Նիւրատի գիծէն ներս կը մնան և որք կը կազմէին երբեմն Հայոց թագաւորութիւնը, Նրկրորդն է աթոռն Սելեւկիոյ, որ Պարսից կամ Պարթեաց կամ Քաղզէացոց կամ Տիգրանի աթոռ ալ կը կոչուի, և կը տարածուի Նիւրատէն և Տիգրիսէն շրջապատեալ հարաւային գաւառաց վրայ որք ազատ էին Հռովմէական կայսերութեան իշխանութենէն, Հեղինակք ոմանք կը կարծեն թէ յառաջնումն Սելեւկիոյ և Պարսից աթոռներն որոշ էին և ի վերջոյ միաւորեցան, բայց քանի որ այդ կարծեաց տարրեւորութիւնը երբէք մեր պաշտպանած գրութեան չստանաներ, մեք

դանց կրնեմք այդ խնդիրը հետադռնել: Այդ աթոռն է որ այժմ Բարեկոնի կամ Քաղկեօցուց պատրիարքութիւն կը կոչուի, և այդ պատրիարքական աթոռը ընդունուած է ոչ միայն արեւելեան եկեղեցիներէն, այլ և Հռովմէական աթոռէն: Այդ կարգէն է ևս եթովպիոյ աթոռը, որ կը պարունակէ արեւելեան Ափրիկոյ Հռովմէական կայսերութեան սահմաններէն դուրս եղած երկիրները: Այդ աթոռն ալ ոչ միայն արեւելեան եկեղեցիներէն ճանչցուած է, այլ և Եւգինէոս Գ. Հռովմայ պապին ժամանակ Հռովմայ աթոռն ալ եթովպիոյ աթոռոյն հետ իբր Եթովպիոյ պապէսութեան հետ միութեան բանապայտութիւններ ունեցաւ: (Գործք ժողովոյն Փլորենտիոյ, Սասն Գ. 104. 11 և 14 Acta, XVIII. 1230 և 1235):

Քրիստոսեոսայ աշխարհաց հոյրապետութիւնները այդպէս բաժնելէն յետոյ, կարող եմք խորհրդածել որ եթէ Հայոց աթոռը ըստ ինքեան և իսկզբանէ և ծագմամբ ինքնագլուխ և անկախ լինէր, պէտք էր որ Կեսարիոյ արքեպիսկոպոսութեան կամ եքսարքոսութեան ենթարկեալ լինէր, վասն զի միայն այդ աթոռոյն հետ յարաբերութիւններ ունեցած է: Իսկ եթէ մեր մերժած կարծեաց համաձայն, ուզէր որ պաշտպանել թէ Կեսարիոյ եքսարքոսութիւնն ենթարկեալ էր Անտիոքայ պատրիարքութեան, այն ատեն Հայոց աթոռը անուղղակի և միջնորդական կերպով ենթարկեալ կը լինէր նաև Անտիոքայ աթոռոյն: Անտիոքայ աթոռոյն ենթարկեալ պէտք էր լինէր ևս, եթէ ըստ այլոց ոմանց Հայաստան պարզապէս Արեւելից վերակոյտութեան կամ արեւելից պատրիարքութեան մի նահանգը լինէր: Եւ որովհետև Կեսարիոյ և Նիքիսոսի և Հերակլիոյ երեք եքսարքութիւնները Քաղկեդոնի ժողովոյն մէջ միաւորուելով Կոստանդնուպօլսոյ պատրիարքութեան սահման տրուեցան, այդ կերպով ալ Հայոց աթոռը Կոստանդնուպօլսոյ պատրիարքութեան ներքև անցած պէտք էր լինէր: Այդ Հայոց աթոռոյն ըստ ինքեան և իսկզբանէ և ծագմամբ անկախութիւնը և ինքնագլխութիւնը ուրացողներ պէտք է որ բացօյլացտ և ապացուցեալ կերպով հաստատեն Հայոց աթոռոյն Կեսարիոյ կամ Անտիոքայ կամ Կոստանդնուպօլսոյ աթոռներէ ունեցած կախումը և անոնց ունեցած հպատակութիւնը, առանց որոց անհիմն կը լինի իրեն դրութիւնը, ինչպէս որ մեք պիտի հաստատեմք: